ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԽՈՐՈՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ОБЩИНА СЕЛА ХОРОНК
АРМАВИРСКОЙ ОБЛАСТИ

ՀՀ Արմավիրի մարզ, գ. Խորոնք
Հեռ. /10374- 099/03-08-08/

С. Хоронк Армавирской обл. РА
Тел. /10374- 099/03-08-08/

N 242

28 11 2019г

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ ՊԱՐՈՆ
Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն մարզպետ

Ձեզ է ներկայացվում Արմավիրի մարզի Խորոնք համայնքի ավագանու 26.11. 2019 թվականի թիվ 8 նիստի որոշումները :

Առդիր՝ 19 էջ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս.ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

Կ.Տ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ**
**ԽՈՐՈՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խորոնք համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Խորոնք, khoronq.armavir@mta.gov.am

**ՈՐՈՇՈՒՄ**
**26 նոյեմբերի 2019 թվականի N 48**

**ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով , Տեղական ինքնակառավարման մասինե Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի վեցերորդ մասով՝

**Ավագանին որոշում է.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խորոնք համայնքի ավագանու՝ 2019 թվականի նոյեմբերի 26-ի թիվ 8 նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

***Ավագանու անդամներ՝*** կողմ դեմ ձեռնպահ՝

1 . Վ.Ամիրյան
2. Ն.Ասատրյան
3. Ա.Գրիգորյան
4. Ա.Խաչատրյան
5. Կ.Կարապետյան

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս.ՆԱՀԱՊԵՏՅԱՆ**

**Կ.Տ.**

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԽՈՐՈՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ՝
2019ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 26-Ի
N 48 ՈՐՈՇՄԱՆ

# ՕՐԱԿԱՐԳ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՈՆՔ ՀԱՄԱՆՅՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ

1.Արմավիրի մարզի Խորոնք համայնքի ավագանու՝ 2019 թվականի նոյեմբերի 26-ի թիվ 8 նիստի օրակարգը հաստատելու մասին:

/զեկուցող՝ Ս.Նահապետյան/

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խորոնք համայնքի վարչական տարածքում 2020 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին:

/զեկուցող՝ Ս.Նահապետյան/

3.Համայնքի նորածին երեխաներ ունեցող ընտանիքներին խրախուսանք հատկացնելու մասին:

/զեկուցող՝ Ս.Նահապետյան/

4.Համայնքի՝ սոցիալապես անապահով ընտանիքներին և օգնություն հատկացնելու մասին :

/զեկուցող՝ Ս.Նահապետյան/

6. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խորոնքի համայնքապետարանի աշխատակազմի , համայնքային բյուջետային հիմնարկների, համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների քանակը, հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին :

/զեկուցող՝ Ս.Նահապետյան/

7. Հավելավճար կիրառելու մասին:

/զեկուցող՝ Վ.Կարապետյան/

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՈՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խորոնք համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Խորոնք, khoronq.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**26 նոյեմբերի 2019 թվականի N49-Ն**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՈՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական տուրքերի և վճարների մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ,9-րդ,10-րդ,11-րդ,12-րդ,14-րդ հոդվածներով, <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 18-րդ կետով , հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության 19.11.2019 թվականի 17/27.3/26724-19 պետական փորձագիտական եզրակացությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

**_ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է ._**

1. Սահմանել Հայաստանի Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խորոնք համայնքի վարչական տարածքում 2020 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը ՝ համաձայն հավելվածի ։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։

| Ավագանու անդամներ՝ | կողմ | դեմ | ձեռնպահ՝ |
|---|---|---|---|
| 1 . Վ.Ամիրյան | | | |
| 2. Ն.Ասատրյան | | | |
| 3. Ա.Գրիգորյան | | | |
| 4. Ա.Խաչատրյան | | | |
| 5. Կ.Կարապետյան | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՈՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ
ՆՈՅԵՄԲԵՐԻ 26 N 49-Ն ՈՐՈՇՄԱՆ

# ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՈՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խորոնք համայնքում սահմանվում են տեղական տուրքերի հետևյալ դրույքաչափերը.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ **տասնհինգ հազար դրամ**,

բ. սույն կետի 1-ին ենթակետի <<ա>> չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **երեսուն հազար դրամ,**

- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **հիսուն հազար դրամ,**

- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **հիսուն հազար դրամ**,

- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **հարյուր հազար դրամ**.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **երեք հազար դրամ,**

- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **հինգ հազար դրամ.**

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ երեք հազար դրամ,

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի ,աե ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն կետի 1-ին ենթակետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն կետի 1-ին ենթակետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ **հինգ հազար դրամ.**

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **երկու հարյուր հազար դրամ.**

5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **վաթսուն հազար դրամ.**

6) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **հիսուն հազար դրամ.**

7) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **երեք հազար հինգ հարյուր դրամ,**
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **տասը հազար հարյուր դրամ**
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **տասներեք հազար հարյուր դրամ**
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **քսան հազար հարյուր դրամ**
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **քսանհինգ հազար հարյուր դրամ**
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **քառասունհինգ հազար հարյուր դրամ**

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **երեք հազար հինգ հարյուր դրամ,**

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **տասը հազար հարյուր դրամ**

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **տասներեք հազար հարյուր դրամ**

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **քսան հազար հարյուր դրամ**

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **քսանհինգ հազար հարյուր դրամ**

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **քառասունհինգ հազար հարյուր դրամ**

8) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում ,Առևտրի և ծառայությունների մասինե Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ **երեք հարյուր հիսուն դրամ՝** մեկ քառակուսի մետրի համար.

9) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ **հինգ հազար դրամ,**

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ **քսանհինգ հազար դրամ,**

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ **երկու հարյուր հազար դրամ,**

դ. խաղատների համար՝ **հինգ հարյուր հազար դրամ,**

ե. շահումով խաղերի համար՝ **երկու հարյուր հիսուն հազար դրամ,**

զ. վիճակախաղերի համար՝ **հարյուր հազար դրամ**.

10) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **երեք հազար հարյուր դրամ,**

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **հինգ հազար հարյուր դրամ,**

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **տասը հազար հարյուր դրամ,**

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **տասնհինգ հազար հարյուր դրամ,**

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **քսան հազար հարյուր դրամ,**

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **երեսուն հազար հարյուր դրամ.**

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի **համար՝հինգ հարյուր դրամ,**

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **հազար հարյուր դրամ,**

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **երկու հազար հարյուր դրամ,**

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **չորս հազար հարյուր դրամ,**

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **ութ հազար հարյուր դրամ,**

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **տասնհինգ հազար հարյուր դրամ.**

11) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ Երևան քաղաքի և միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ **երկու հազար դրամ**,

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ **երեք հազար հինգ հարյուր դրամ,**

գ. սոցիալական գովազդի համար՝ **զրո դրամ,**

դ. այլ արտաքին գովազդի համար՝ **հազար հինգ հարյուր դրամ,**

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով,

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով.

12) Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **հարյուր հազար դրամ.**

13) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ **տասը հազար դրամ.**

14) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **հինգ հարյուր հազար դրամ.**

15) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **երկու միլիոն հինգ հարյուր հազար դրամ,**

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **հինգ միլիոն դրամ,**

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **յոթ միլիոն դրամ,**

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **տասը միլիոն դրամ:**

15) համայնքի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառության իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **հիսուն հազար դրամ:**

## Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խորոնք համայնքի վարչական տարածքում սահմանվում են տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խորոնք համայնքում սահմանվում են տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը.

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ **հազար դրամ**

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ **հազար դրամ**

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ **հազար դրամ**

4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ **երկու հազար դրամ**

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ **հինգ հազար դրամ**

6) համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ **հինգ հազար դրամ**

7) համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության վճար սահմանվում է՝

ա . Կենացաղային աղբի համար, ըստ հաշվառված անձանց քանակի, համայնքում անձնագրային հաշվառման կանոններով հաշվառում ունեցող կամ ըստ հասցեի բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական **հիսուն դրամ**

բ . համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության՝ մեկ մ3 համար երկու հազար դրամ, մեկ տոննայի համար **հինգ հազար դրամ:**

գ .առևտրի / այդ թվում շուկաների/, հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ՝ 1 մ 2 **հիսուն դրամ** :

դ . արտադրական , արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինություններ՝ 1 մ 2 **հինգ դրամ** :

ե . կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական շինություններ՝ 1 մ 2 **երեք դրամ:**

8) Համայնքային ենթակայության մանկապարտեզում երեխաների պահպանման համար ծնողական վճար սահմանել **հինգ հազար հինգ հարյուր դրամ .**

Բնակչության առանձին խմբերի համար վճարների արտոնություններ սահմանել հետևյալ չափերով՝

ա . միակողմանի ծնողազուրկ երեխաների համար 50 % - ի չափով ,

բ . երկկողմանի ծնողազուրկ երեխաների համար 100 % - ի չափով,

գ . զոհված և հաշմանդամ դարձած ազատամարտիկների,ինչպես նաև 1-ին կարգի հաշմանդամների երեխաների համար 50 % - ի չափով :

9)Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է **տասը հազար դրամ** :

10) Համայնքի բնակիչ համարվող անձանց աշխատավարձի և աշխատանքային հարաբերությունների հետ կապված այլ վճարներ ստանալու լիազորագիր հաստատելու համար վճար սահմանել ՝ **մեկ հազար դրամ** ,

11) Համայնքի բնակիչ համարվող անձանց նպաստներ և կրթաթոշակներ ,քաղաքացիների բանկային ավանդներ և փոստային առաքումներ (այդ թվում դրամական և ծանրոցային) ստանալու լիազորագիր հաստատելու համար սահմանել **մեկ հազար դրամ**,

12) Համայնքի բնակիչ համարվող անձանց բնութագիր և երաշխավորագիր տալու համար վճար սահմանել՝ **մեկ հազար դրամ**,

13) Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ տրամադրելու համար ՝ մեկ փաստաթղթի համար վճար սահմանել **մեկ հազար դրամ** :

14) Համայնքն սպասարկող անասնաբույժի ծառայությունների դիմաց տեղական վճարի դրույքաչափ սահմանել **զրո դրամ:**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՈՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խորոնք համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Խորոնք, khoronq.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**26 նոյեմբերի 2019 թվականի N 50**

## ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐԱԾԻՆ ԵՐԵԽԱՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԽՐԱԽՈՒՍԱՆՔ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով և հիմք ընդունելով <<Առողջապահության , աշխատանքի և սոցիալական հարցերի>> մշտական հանձնաժողովի 18.11.2019 թվականի N3 եզրակացությունը, Խորոնք համայնքի ավագանու 20.05.2011 թվականի թիվ 4 արտահերթ նիստի N3 որոշման 4-րդ կետը ՝

***Համայնքի ավագանին որոշում է.***

1. Խորոնք համայնքի բյուջեի սոցիալապես անապահովներ 10-7-1 նախահաշվի 4729 հոդվածից 150.000 ( մեկ հարյուր հիսուն հազար ) դրամ գումար հատկացնել հետևյալ 5 նորածին երեխաներ ունեցող ընտանիքներին՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| ***Ավագանու անդամներ՝*** | կողմ՝ | դեմ՝ | ձեռնպահ՝ |
|---|---|---|---|
| 1 .Ն.Ասատրյան | | | |
| 2. Կ.Կարապետյան | | | |
| 3. Վ.Ամիրյան | | | |
| 4. Ա.Գրիգորյան | | | |
| 5. Ա.Խաչատրյան | | | |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս.ՆԱՀԱՊԵՏՅԱՆ**

**Կ.Տ**

ՀԱՎԵԼՎԱԾ 1
ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՈՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 26-Ի
N 51 ՈՐՈՇՄԱՆ

ՑՈՒՑԱԿ

ԽՈՐՈՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ

| h/h | Ազգանուն, անուն, հայրանուն | գումարը |
|---|---|---|
| 1. | Արսենյան Նոնա Ժիրայրի | 40,000 |
| 2. | Հակոբյան Կարինե Արմենակի | 40,000 |
| 3. | Պողոսյան Վոլոդյա Կորյունի | 40,000 |
| 4. | Սիմոնյան Մայրամ Գուրգենի | 40,000 |

ԸՆԴԱՄԵՆԸ 160,000 ( մեկ հարյուր վաթսուն հազար ) ՀՀ դրամ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՈՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խորոնք համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Խորոնք, khoronq.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**-26- նոյեմբերի 2019 թվականի N 51**

## ՀԱՄԱՅՆՔԻ ՝ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով և հիմք ընդունելով <<Առողջապահության ,աշխատանքի և սոցիալական հարցերի >> մշտական հանձնաժողովի 18,11,2019թվականի N3 եզրակացությունը՝

***Համայնքի ավագանին որոշում է.***

1. Խորոնք համայնքի բյուջեի սոցիալապես անապահովներ 10-7-1 նախահաշվի 4729 հոդվածից 160,000 (մեկ հարյուր վաթսուն հազար ) դրամ գումար հատկացնել հետևյալ սոցիալապես անապահով 4 ընտանիքներին (հավելված 1) :
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| ***Ավագանու անդամներ՝*** | կողմ՝ | դեմ՝ | ձեռնպահ՝ |
|---|---|---|---|
| 1 . Վ.Ամիրյան | ________ | ________ | ________ |
| 2. Ն. Ասատրյան | ________ | ________ | ________ |
| 3. Ա. Գրիգորյան | ________ | ________ | ________ |
| 4. Ա. Խաչատրյան | ________ | ________ | ________ |
| 5.Կ. Կարապետյան | ________ | ________ | ________ |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս.ՆԱՀԱՊԵՏՅԱՆ**

Կ.Տ.

ՀԱՎԵԼՎԱԾ 1
ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՈՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ՝ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 26-Ի
N 51 ՈՐՈՇՄԱՆ

ՑՈՒՑԱԿ

ԽՈՐՈՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ

| h/h | Ազգանուն, անուն, հայրանուն | գումարը |
|---|---|---|
| 1. | Արսենյան Նոնա Ժիրայրի | 40,000 |
| 2. | Հակոբյան Կարինե Արմենակի | 40,000 |
| 3. | Պողոսյան Վոլոդյա Կորյունի | 40,000 |
| 4. | Սիմոնյան Մայրամ Գուրգենի | 40,000 |

ԸՆԴԱՄԵՆԸ 160,000 ( մեկ հարյուր վաթսուն հազար ) ՀՀ դրամ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՈՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խորոնք համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Խորոնք, khoronq.armavir@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ու Մ**
26 **նոյեմբերի** 2019 **թվականի** N 52

**ԽՈՐՈՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ , ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ , ՀՈԱԿ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ , ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 28-րդ կետով , և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

**Ավագանին որոշեց.**

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խորոնք համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 12-ի << Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խորոնքի գյուղապետարանի աշխատակազմի և բյուջետային հիմնարկների , ՀՈԱԿ աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին >> N 47 որոշումը:
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խորոնքի համայնքապետարանի աշխատակազմի , համայնքային բյուջետային հիմնարկների, համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների քանակը, հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածներ 1-ի, 2-ի, 3-ի, 4-ի :
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

***Ավագանու անդամներ՝*** կողմ դեմ ձեռնպահ՝

1 .Ն.Ասատրյան

2.. Կ.Կարապետյան

3. Վ.Ամիրյան

4. Ա.Գրիգորյան

5. Ա.Խաչատրյան

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս.ՆԱՀԱՊԵՏՅԱՆ**

ՀԱՎԵԼՎԱԾ 1
ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԽՈՐՈՆՔ ՀԱՄԱՅՔՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ
ՆՈՅԵՄԲԵՐԻ 26-Ի ԹԻՎ 8 ՆԻՍՏԻ
N 52 ՈՐՈՇՄԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՈՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը

| h/h | ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ |
|---|---|---|---|
| 1 | Համայնքի ղեկավար | 1 | 360.000 |
| 2 | Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 196.000 |
| 3 | Համայնքի ղեկավարի օգնական | 1 | 165.000 |
| | | | |
| 4 | Աշխատակազմի քարտուղար | 1 | 260.000 |
| 5 | Առաջատար մասնագետ | 1 | 196.000 |
| 6 | 1-ին կարգի մասնագետ | 1 | 165.000 |
| 7 | 2-րդ կարգի մասնագետ | 1 | 155.000 |
| 8 | 2-րդ կարգի մասնագետ | 1 | 155.000 |
| | | | |
| | ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ | | |
| 9 | Այգեպան | 1 | 92.618 |
| 10 | Հավաքարար | 1 | 92.618 |
| 11 | Վարորդ | 1 | 140.000 |
| 12 | Աղբահավաք | 1 | 92.618 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ՝ | 12 | |

ԽՈՐՈՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ / Ս.ՆԱՀԱՊԵՏՅԱՆ/

ՀԱՎԵԼՎԱԾ 2
ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԽՈՐՈՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ՝ 2019 ԹՎԱԿԱՆԻ
ՆՈՅԵՄԲԵՐԻ 26-Ի ԹԻՎ 8 ՆԻՍՏԻ
N 52 ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՈՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ
«ԽՈՐՈՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ ,ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ, ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ,ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՉԱՓԸ

1.Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը

| h/h | ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ |
|---|---|---|---|
| 1. | Մանկապարտեզի տնօրեն | 1 | 130.000 |
| 2. | Հաշվապահ | 0.5 | 117.000 |
| 3. | Դաստիարակ | 2.24 | 100.000 |
| 4. | Դայակ | 2 | 92.618 |
| 5. | Դաշնակահար | 0.5 | 110.000 |
| 6. | Խոհարար | 1 | 92.618 |
| 7. | Խոհարարի օգնական | 0.5 | 92.618 |
| 8. | Բուժքույր | 0.5 | 92.618 |
| 9. | Դռնապան | 0.5 | 92.618 |
| 10. | Տնտեսվար | 0.5 | 92.618 |
| 11. | Պահակ | 2 | 92.618 |
| 12. | Հավաքարար | 0.5 | 92.618 |
| | Ընդամենը՝ | 12.24 | |

Խորոնք համայնքի ղեկավար՝ / Ս.Նահապետյան /

ՀԱՎԵԼՎԱԾ 3
ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԽՈՐՈՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ
ՆՈՅԵՄԲԵՐԻ 26-Ի ԹԻՎ 8 ՆԻՍՏԻ
№ 52 ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՈՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ «ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ» ՄԻԱՑՅԱԼ ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ, ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ,ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՉԱՓԸ

1.Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը

| h/h | ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ |
|---|---|---|---|
| 1. | Մշակույթի տան տնօրեն | 1 | 100.000 |
| 2. | Հաշվապահ | 1 | 92.618 |
| 3. | Հավաքարար | 1 | 92.618 |
| 4. | Գրադարանի վարիչ | 1 | 92.618 |
| 5. | Գեղարվեստական ղեկավար | 1 | 92.618 |
| 6. | Պահակ | 2 | 92.618 |
| 7. | Այգեպան | 1 | 92.618 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | 8 | |

Խորոնք համայնքի ղեկավար՝ /Ս. Նահապետյան /

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԽՈՐՈՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ
ՆՈՅԵՄԲԵՐԻ 26-Ի ԹԻՎ 8 ՆԻՍՏԻ
N 52 ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՈՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ «ԽՈՐՈՆՔԻ ԲՈՒԺԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ ,ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ, ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ

1.Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը՝

| հ/հ | ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ԴՐՈՒՅՔԸ | ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀԱՍՏԻՔԸ |
|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 1 |
| 2 | Ընտանեկան բժիշկ | 2 | 2 |
| 3 | Ընտանեկան բուժքույր | 3 | 3 |
| 4 | Ընտանեկան բուժքույր (ԲՄԿ) | 2 | 2 |
| 5 | Դպրոցական բուժքույր | 1 | 1 |
| 5 | Լաբարանտ բուժքույր | 0.5 | 0.5 |
| 6 | Հաշվապահ | 1 | 1 |
| 7 | Օպերատոր | 1 | 1 |
| 8 | Կրտսեր բուժ աշխատող | 1 | 1 |
| Ընդամենը՝ | | 12.5 | 12.5 |

Խորոնք համայքի ղեկավար՝ / Ս.Նահապետյան /

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՈՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խորոնք համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Խորոնք, khoronq.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

**26 նոյեմբերի 2019 թվականի N 53**

## ՀԱՎԵԼԱՎՃԱՐ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով՝

***Ավագանին որոշեց.***

1. Համայնքում՝ սոցիալ-տնտեսական բնագավառում արդյունավետ աշխատանք կատարելու համար համայնքի ղեկավար Ս. Նահապետյանին հատկացնել հավելավճար՝ 245.000 (երկու հարյուր քառասունհինգ հազար) դրամ գումարի չափով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| ***Ավագանու անդամներ՝*** | կողմ՝ | դեմ՝ | ձեռնպահ՝ |
|---|---|---|---|
| 1 .Ն.Ասատրյան | | | |
| 2. Կ.Կարապետյան | | | |
| 3. Վ.Ամիրյան | | | |
| 4. Ա.Գրիգորյան | | | |
| 5. Ա.Խաչատրյան | | | |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս.ՆԱՀԱՊԵՏՅԱՆ**

Կ.Տ.